





## ԱՐԱՏՏԱ ԵՐԿՐԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Արատտա երկիրը վկայուած է շումերական վիպերգերում, եւ ըստ շումերների պատկերացումների, «Սուրբ օրէնքների (ծէսերի) երկիր» է: Արատտան գտնուել է Հայկական լեռնաշխարհում: Այդ տեղորոշումը, մեր կարծիքով, բաւական համոզիչ կերպով կատարել է Արտակ Մովսիսեանը<sup>1</sup>:

Շումերական տեքստերում Արատտա երկրանունը գրուած է յատուկ գաղափարագրով, որ ունի Արատտա (Aratta) ընթերցում: Այդ սեպախումբը հետեւեալն է , որ իրենից ներկայացնում է երեք սեպերի համադրում: Այս համադրումը շումերերէնում<sup>2</sup> ներկայացուած է LAMxKUR+RU ձեւով: LAM  նշանի մէջ (կամ վրայ) ներգծուած են KUR  եւ RU  նշանները:

Նոյն երկիրը կարող է ունենալ մի քանի տարբեր անուն. յատկապէս տարբեր լեզուներում: Նաեւ պէտք է նկատի առնել, որ հնում (ընդհուպ մինչեւ միջնադար) յատուկ անունները, այդ թւում եւ՝ տեղանունները, թարգմանուած էին (հմտ. Մեսոպոտամիա-Միջագետք, Հելիոպոլիս-Արեգ քաղաք եւ այլն): Որպէսզի մենք ճշտենք, թէ շումերներն ինչպէս են անուանել այդ երկիրը, պէտք է քննենք այս սեպախումբը:

LAM սեպը, երբ ներկայանում է միայնակ (առանց դետերմինատիւնների եւ այլ վանկերի), ըստ PSD-ի կայքի, ունի միայն

<sup>1</sup> ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամեակում (ըստ գրաւոր աղբիւրների)»: Հարցի ուսումնասիրութեան պատմութիւնը եւ Արատտայի տեղորոշման փաստարկները մանրամասն տե՛ս գլուխի «Արատտա երկրի տեղորոշումը» բաժնում էջ 16-29:

<sup>2</sup> Փենսիլվանիայի համալսարանի շումերագիտութեան բաժնի կայքն է, որ ներկայումս շումերերէնի ամենամաքողական բառարանն է. տե՛ս՝ <http://psd.museum.upenn.edu/epsd/nepsd-frame.html> (յապաւմամբ՝ PSD)

մէկ իմաստ. «to flourish – ծաղկել»։ Կայ նաեւ սրա իմաստային նրբերանգը. «to make grow luxuriantly – փարթամօրէն աճեցնել, ուռնացնել, ծաղկեցնել»։

KUR սեպի հիմնական երկու իմաստներն են «land, country-հող, երկիր» եւ «mountain(s)-լեռ(ներ)»։

RU վերջին սեպը մեծ հաւանականութեամբ հնչիւնական բաղադրիչ է եւ իմաստային բեռ չի կրում։ RU-ն դրուած է յուշելու համար, որ KUR նշանը պէտք է կարդալ հէնց KUR (ոչ թէ ասենք mat կամ sat կամ gin<sup>3</sup>). այսինքն՝ նախորդ նշանի ընթերցումը պէտք է աւարտուի R-ով։

Ըստ Լաբատի բառարանի<sup>3</sup>, Արատտա երկրի անունը գրուած է երկու կերպ.

LAM.KUR.RU<sup>ki</sup>=Aratta<sup>ki</sup> եւ LAMxKUR.RU<sup>ki</sup>=Aratta<sup>2 ki</sup>

LAMxKUR+RU-aratta սեպախումբը որպէս հասարակ անուն նշանակում է. «heavy, important-ծանրակշիռ, կարեւոր» եւ «praise, glory-գովաբանութիւն, փառաբանութիւն»։ Մենք կարծում ենք, որ իմաստային այս անցումը կապ ունի հէնց LAM-«ծաղկել» գաղափարի հետ։ Հմմտ. օրինակ հայերէն քարգաւառ բառը, որի համար Հր. Աճառեանն իբրեւ առաջին իմաստ դնում է «պանծալի, փառաւոր, անուանի», ապա (իբրեւ երկրորդ իմաստ). «զուարթ, ծաղկեալ»։ Փոխաբերական իմաստները ծագում են առարկայական իմաստներից։ Առաջին, ամենանախնական եւ առարկայական իմաստն այստեղ «ծաղկել»-ն է։

Այսպիսով, ունենք մի սեպախումբ, որ նշանակում է «ծաղկել-լեռ(ներ)»։ Ահա Արատտայի շումերական անունը (անուններից մէկը)։ Այս անունը մեզ տանում է դէպի Մադկեռ լեռ, Մադկանց լեռներ։

Այս մասին յիշենք հանրագիտարանային տուեալներ.

«Մադկանց լեռներ, Ալադադ, Մադկի լեռ(ներ), Մադկուտան լեռներ, Շառիան-Ալադադ, - Լեռներ (լեռնաշղթայ) Հայկական լեռնաշխարհում, Վանայ լճից հիւսիս-արեւելք, Արածանիի վերին հոսանքի շրջանում, նրա ձախ կողմում, Մանազկեր-

<sup>3</sup> René Labat, «Manuel d'Epigraphie Akkadienne», Paris 1976. էջ 197. սեպանը-շաններ N 435 եւ N 436.

տի եւ Ալաշկերտի դաշտերի միջեւ։ Հարաւ-արեւմուտքից հիւսիս-արեւելք աղեղնաձեւ տարածուած լեռնազանգուած է՝ կազմուած հրաբխային ապարներից։ Լաւաներն ընդարձակ տարածութեամբ փոռուած են չորս ուղղութիւններով։ Դէպի հիւսիս տարածուող լաւային բարձրաւանդակները Արածանիի ձախակողմեան վտակների շնորհիւ վեր են ածուել մի քանի լեռնաբազուկների... Կենտրոնական լեռնաբազուկներից մէկը վերջանում է ոչ այնքան բարձր Նպատ գագաթով։ Սրա հիւսիսային ստորոտների փոքրիկ հարթավայրը, որ կազմում է Ալաշկերտի դաշտի մի մասը, հնում յայտնի էր Ձիրաւ անունով։ Ըստ Ալիշանի, լատինական աղբիւրներում Նպատ գագաթի անունով այս լեռնաշղթան կոչուել է նաեւ Նպատ կամ Նպատական։ Արեւելքում գտնուում է լեռնաշղթայի ամենաբարձր՝ Թոնդուրեկ (Թոնդրակ) գագաթը, հիւսիս-արեւմուտքում՝ Մադկէոյ կամ Ալադադ գագաթը, որ իր բարձրութեամբ երկրորդն է, բայց աւելի վեհաշուք։ Սրա անունով էլ կոչուած է ամբողջ լեռնաշղթան։ Լեռնազանգուածը մասնատուած է Արածանի, Արճէշ եւ Բերկրի գետերի հովիտներով, որոնք եզերուելով բարձրադիր գագաթներով, կազմում են մի գեղեցիկ, ծաղկաշատ բարձրաւանդակ։ ... Դեռեւս հնուց յայտնի էր որպէս Արշակունիների ամառանոցավայր։ Այստեղ է եղել Շահապիւանը, որը յայտնի էր որպէս «Բանակատեղի Հայոց թագաւորաց»։ Ըստ Ալիշանի լեռնաշղթայի հիւսիսային կողմը Յայսմաուրքում կոչուել է «Մմակ լեռան Մադկոց»։ Ոմանք Մադկանց լեռները նոյնացնում են ասորեստանեան սեպագիր արձանագրութիւններում յիշատակուած Իրդիա (Էրիտիա) լեռներին<sup>4</sup>։

Էրիտիա-Ալադադ նոյնացումը կատարել է Ն. Ադոնցը. «Իրիտիան չի կարող Սիփանը լինել, ինչպէս կարծում է Շտրեկը...։ Սարգոնը, արեւելքից գալով, Արգաբիա լեռից հասնում է Իրիտիա լեռը, անցնում Արմարիլիի վրայով եւ հասնում լճի ափը։ Քանի որ Սարգոնը գալիս էր արեւելքից արեւմուտք, ուրեմն Իրտիան կամ Իրիտիան պետք է գտնուէր լճի հիւսիսային կէտում, Ալադադի լեռնաշղթայում<sup>5</sup>, «Եփրատի ակունքին կանգնեցուած պատկերն այն է, որ Սալմանասարը թողել էր Իրիտիա լեռան վրայ 857 թուականին։ Իրի-

<sup>4</sup> Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀԾՏԲ), հ 2, էջ 834:  
<sup>5</sup> Ն. Ադոնց «Հայաստանի պատմութիւն», Երեւան 1972, էջ 86:

տան կազմում է Ալադադի մի մասը, որտեղից սկիզբ է առնում Եփրատի բազմաթիւ ակունքներից մէկը»<sup>6</sup>:

Ասորեստանեան աղբիւրներում լեռնանունը գրուած է E-ri-ti-a (=E-ri-di<sub>3</sub>-a)<sup>7</sup> ձեւով: Մասնագիտական գրականութեան մէջ այս անունը կապուել է ուրարտական <sup>URU</sup> Er-di-ia, <sup>URU</sup> E-ri-di-a-ni<sup>8</sup> քաղաքանունան հետ<sup>9</sup>: Սեպագիր RI նշանը, նոյն RE նշանն է, եւ գրուածը նոյն յաջողութեամբ կարելի է կարդալ նաեւ <sup>bn</sup> E-re-ti-a, <sup>f<sup>u</sup>q<sup>u</sup>f</sup> E-re-di-a-ni:

Ե՛լ շումերերէնում, ե՛լ ուրարտերէնում առկայ է մի ձայնաւոր (բաց վանկ), որ հնչում է ա-ի եւ է-ի միջեւ, կայ ա-է հերթագայում: Սա նշանակում է, որ Արատտա անունը կարող էր հնչել նաեւ էրետէ, էրեդէ: Մենք խիստ հաւանական ենք համարում Ն. Ադոնցի նոյնացումը (էրիտիա=Ալադադ=Մադկանց լեռներ). այսինքն՝ Մալմանասար III-ի յիշատակած էրիտիա-էրիդիա լեռնանունը կարող է նոյնը լինել Արատտա տեղանունան հետ: Ն. Յարութիւնեանն այն տեղադրում է Վանայ լճից հիւսիս<sup>10</sup>:

«Մադկանց լեռներ - Ալադադ, գտնւում են Հայկական լեռնաշխարհում, Արածանիի վերին հոսանքի շրջանում, Վանայ լճից հիւսիս-արեւելք, Մանազկերտի եւ Աբադայի դաշտերի միջեւ: Արեւելքում բարձրանում են Թոնդրակ (3542 մ), արեւմուտքում՝ Մուրատբաշի (թուրքերէն անունը նշանակում է Մուրադ-Արածանիի գլուխ) (Մադկոյ լեռ 3519 մ), մերձգագաթնային սարաւանդի վրայ՝ Նպատ (2332 մ), Ալա-դադ (3351 մ), Կալտիկ (3200 մ), Կերդահոլ (3255 մ) գագաթները...: Մադկանց լեռները մասնատուած են Արածանի, Արճէշ եւ Բերկրի գետերի հովիտներով»<sup>11</sup>:

«Մադկոտն, Մադկետն, Մադկոտն, Մադկուտն-գաւառ Մեծ Հայքի Այրարատ նահանգում: «Աշխարհացոյց»-ում (...) յիշատակուած է որպէս Այրարատ նահանգի եօթերորդ գաւառ: Մադկոտնը հիւսիս-արեւելքից սահմանակից էր Կոզոպիտ, արեւ-

6 Անդ, էջ 89:  
7 Н. В. Арутюнян, «Топонимика Урарту», Ереван, 1985, стр. 261.  
8 Н. В. Арутюнян, «Корпус урартских клинообразных надписей», Ереван, 2001, стр. 504.  
9 Н. В. Арутюнян, «Топонимика Урарту», Ереван, 1985, стр. 261.  
10 Н. В. Арутюнян, «Топонимика Урарту», Ереван, 1985, стр. 261.  
11 Հայկական Սովետական հանրագիտարան, 4.5, էջ 111:

մուտքից՝ Բագրեւանդ գաւառներին, հարաւից՝ Վասպուրական, հարաւ-արեւմուտքից՝ Տուրուբերան նահանգներին: Տարածուած էր Արածանի գետի վերին աւազանում, Մադկանց (Ալադադ) լեռների լանջերին, որտեղից սկիզբ է առնում Եփրատի ամենամեծ վտակը՝ Արածանին: Մադկոտնի հարաւային մասում ձգւում են Մադկանց, իսկ հիւսիսում՝ Դիադինի լեռները: Եղել է հայ թագաւորների եւ իշխանների ամառանոց...»<sup>12</sup>:

«Գաւառի նշանաւոր բնակավայրերից էին Զարեհաւանը, ... Շահապիւան աւանն ու վանքը, որտեղ գումարւում էին աշխարհաժողովները եւ կատարւում Նաւասարդի տօները, Անգղ բերդը եւ քաղաքը: 10-11-րդ դարերից յետոյ Մադկոտնը այլեւս որպէս գաւառ չի յիշատակուած»<sup>13</sup>:

Հետաքրքիր է, որ լեռնաշղթայի անունը նոյնական է ո՛չ թէ ամենաբարձր (Թոնդրակ), այլ երկրորդ գագաթի (Մադկէոյ) անունան հետ: Կարծում ենք, այստեղ մի կարեւոր նրբութիւն կայ: Թոնդրակը գործող հրաբուխ է մինչեւ այսօր: Արատտայի ժամանակներից մեզ բաժանում է առնուազն 4800 տարի: Այդ ընթացքում լեռը բազմիցս ժայթքել է, եւ նրա բարձրութիւնն աճել է: Արատտայի ժամանակներում ամենաբարձր գագաթը մեծ հաւանականութեամբ եղել է հէնց Մադկէոյ լեռը, որն այսօր երկրորդն է: Մեր աղբիւրներում շփոթ կայ: Ըստ հանրագիտարանի, բարձրութեամբ երրորդ գագաթն է (Նպատը) կոչւում Ալադադ, իսկ ըստ ՀՀՇՏԲ-ի, Ալադադ է կոչւում երկրորդ գագաթը (=Մադկէոյ լեռը):

Ի՞նչ ենք մենք տեսնում այս տարածքում.

ա) Արածանիի ակունքը, որ պաշտամունքային տարածք է (այստեղ, ըստ տեղացիների պատկերացումների, եղել է դրախտը):

բ) Շահապիւան, որ է «բանակատեղ Հայոց թագաւորաց»:  
Այսինքն՝ թագաւորները, որքան էլ տարբեր մայրաքաղաքներ ու աթոռանիստներ ունենան, միեւնոյն է, ամուսնը այստեղ են: Սա ամառային նստավայր է, որտեղից կառավարւում է երկիրը:

գ) այստեղ են հրաւիրւում աշխարհաժողովները: Այստեղ են ընդունւում կրօնական-եկեղեցական օրէնքներ եւ կանոններ: Ժամանակակից լեզուով՝ այստեղ է «օրէնսդիր մարմինը» (հմմտ.

12 Հայկական Սովետական հանրագիտարան, 4.5, էջ 112:  
13 ՀՀՇՏԲ, 4 2, էջ 838:

Արատտա-«Սուրբ օրհնքների երկիր», կամ «Աստուածների ժողովի երկիր (լեռ)»:

դ) այստեղ է բանակի ամառանոցը: Այսինքն, եթէ չկայ պատերազմ, սա զօրքի հիմնական բանակատեղին է ամառային շրջանում:

ե) այստեղ է մեծ շուքով նշուում պետական ամենամեծ տօնը՝ Նաւասարդը: (Հմմտ. «սուրբ ծէսերի երկիր». ME գաղափարագիրը կարելի է թարգմանել ե՛լ «օրհնք» եւ «ծէս, կարգ»): Նպատը Մաղկանց լեռներ լեռնաշղթայի լեռ է: Նրա արեւելեան լանջերը Մաղկոտն գաւառում են, իսկ արեւմտեան լանջերը՝ Բագրեւանդում:

զ) այստեղ հայերը մկրտուեցին իբրեւ նորադարձ քրիստոնեաներ Արածանիի ջրերում:

Մասնագիտական գրականութեան մեջ Արատտա տեղանունը կապուել է Արարատ տեղանունը<sup>14</sup>: Եթէ այս կարծիքը ճիշտ է, ապա Արատտա երկրի մեր տեղորոշումը սրան չի հակասում, որովհետեւ Մաղկանց լեռները եւ Մաղկոտն գաւառը Այրարատ նահանգում են: Այս դէպքում Արատտա=Արարատ=Այրարատ նահանգ: Բայց մենք աւելի հակուած ենք Արատտա տեղանուն մեջ տեսնել Արած-անի գետանունը (տ-ծ տարբերութեան համար Հմմտ. արած-ել-արաւտ): Յիշենք, որ Եփրատ գետի անունը Ասորեստանեան որոշ պատմական արձանագրութիւններում գրուում է նաեւ A.RAT ձեւով<sup>15</sup>, որ, ըստ մեզ, նոյն Արած-անի գետանունն է: Նոյն Եփրատը Սուբիր երկրում (ըստ ոմանց խուռիերէն) կոչուում է U<sub>2</sub>-ru-ut-tu<sup>16</sup>: Արատ եւ Օրոտ ձեւերը արտասանական, հրնչերանգային տարբերութիւններ են՝ գետանունը նոյնն է:

Տոպոնիմիկայում սովորական երեւոյթ է, երբ գիւղի, քաղաքի անուամբ կոչուում է գետը կամ հակառակը, գետի անուամբ կոչուում է բնակատեղին: Նոյն երեւոյթը առկայ է նաեւ լեռների պարագայում, երբ քաղաքը կոչուում է այն լեռան անուամբ, որի լանջին գտնուում է: Քանի որ Արատտան կոչուում է Արատտա քաղաքի երկիր (URU Aratta KI), իսկ սեպախումբը

<sup>14</sup> ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ, «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամեակում (ըստ գրաւոր աղբիւրների)», էջ 20:  
<sup>15</sup> Br Ignace F. Gelb, «Hurrians and Subarians», Chicago, page 98.  
<sup>16</sup> Անդ՝ page 21:

ներկայացնում է «ծաղկել-լեռ(ներ)», ապա Արատտա անունը կարող էր պահպանուել նաեւ լեռան կամ լեռների անուններում<sup>17</sup>:

Բերկրի գետանունը տառացիօրէն հայերէն քերկրիլ-«ուրախանալ, հրճուել, զուարճանալ» բառն է: Իսկ զուարճանալ գրաբարում նշանակում է. «1.գրօսնիլ, ուրախութիւն անել, ուրախանալ, 2.ուռճանալ, կանաչիլ, ծլիլ, ծաղկիլ»: Բերկրի գետանունը նոյն համատեքստում է, ինչ lam-ծլել, ծաղկել-ը:

Aratta<sub>2</sub> նշանը կազմուած է LAMxKUR.RU սկզբունքով, որտեղ LAMxKUR-ը իբրեւ հասարակ անուն, նշանակում է (Ֆրանսերէն) «vaincre-յաղթել, յաղթահարել, նուաճել»<sup>18</sup>: Այս դէպքում սեպախումբը կարողում են IŠ<sub>11</sub>: Արատտան, փաստօրէն մի երկիր է, որ կոչուում է ե՛լ «ծաղկել-լեռներ» եւ «յաղթ(ել)»: Շումերները գրում են միայն բառի արմատը, որ կարող է ունենալ ե՛լ բայական իմաստ (ծաղկել, յաղթել), ե՛լ գոյականական իմաստ (ծաղիկ, յաղթանակ), ե՛լ ածականական իմաստ (յաղթ): Արատտա երկրի միւս անունն է «յաղթել, յաղթ, յաղթանակ»: Նրանք գրում են IŠ<sub>11</sub>.ru<sup>ki</sup>=յաղթել, յաղթանակ, յաղթ<sup>berk</sup> եւ հասկանում են Aratta<sub>2</sub><sup>ki</sup>: Յիշենք, որ գրաբարում նպատակ բառը նշանակում է «յաղթանակ, յաղթութեան մրցանակ»<sup>19</sup>: Մաղկանց լեռները նոյն նպատ, նպատակ կամ նպատական լեռներն են: Լեռնաշղթան կոչուում է նաեւ նպատ<sup>20</sup> գագաթի անուամբ: Նպատ լեռը վրա-

<sup>17</sup> Մաղկանց լեռներ լեռնաշղթայի միւս անունն է Ալադադ: Մենք չենք բացառում, որ այս անունը կարող է լինել հէնց Արատտա, Արադա անունն է: Թուրքերէնին բնորոշ է տեղանունների ար-ը հնչեցնել ալ. օրինակ Արած-Ալագեազ: Արատտա անունը կարող էր դառնալ Ալադա: Բառակերչի դի յաւելումը արդիւնք է ժողովրդական ստուգաբանութեան: Թուրքերը բառը հասկացել են դադ-«սար, լեռ» իմաստով: Դադ մասնիկը կարող էր դրուել նաեւ բառի վրայ (Հմմտ. հայկ. Սիփան, Թուրք. Սիփան-դադ). Արատ-դադ=Ալադադ:

<sup>18</sup> René Labat, «Manuel d'Epigraphie Akkadienne, Paris 1976, էջ 197, սեպանշան N 436:

<sup>19</sup> ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ, «Հայերէն արմատական բառարան», հ. 3, էջ 475:

<sup>20</sup> Նպատ լեռնանունը պէտք է կապել խուռիական դիցանուն հետ, որ վկայուած է 3 ձեւով՝ Նուպատիկ, Նուրադիգ եւ Լուրադազա (լ-ն տարբերութեան համար Հմմտ. նապաստակ-լապստակ): Սրանք հայերէնում կանոնաւորապէս պիտի տային նպատիկ, նպատակ, նպատ ձեւերը:

ցական աղբիւրներում կոչւում է Նպատակ<sup>21</sup>, որ պէտք է համարել աւելի հին ու անաղարտ ձեւ: Արատտայի շումերական երկու անուններն իմաստով շատ տարբեր են, բայց խօսքը նոյն երկրի մասին է: Երկու անունն էլ մեզ տանում են նոյն տեղը, որովհետեւ նոյն լեռնաշղթան կոչւում է ե՛լ Մաղկանց ե՛լ Նպատ-ական (լեռներ):

Ի՞նչ ենք արել մենք Արատտա երկիրը տեղորոշելու համար: Պարզապէս թարգմանել ենք շումերերէն LAM եւ IŠ<sub>11</sub> նշանները: Երբ սրանց իմաստները հնչեցնում ենք հայերէն (գըրաբար), ստանում ենք Մաղկել լեռներ եւ Նպատակ լեռներ:

**Եզրակացութիւն**

Aratta=LAMxKUR.RU=«ծաղկել-լեռ(ներ)»=Մաղկանց լեռներ, Մաղկէոյ լեռ, Մաղկոտոն գաւառ

Aratta<sub>2</sub>=IŠ<sub>11</sub>=«յաղթել, յաղթանակ»=«նպատակ»=Նպատակ (Նըպատ) լեռ, Նպատական լեռներ = Մաղկանց լեռներ

Aratta=\*Արատ-դաղ=Ալաղաղ = Մաղկանց լեռներ

Aratta=Արած-անի = Մաղկանց լեռներ = Արածանիի վերին հոսանք, Արածանիի ակունքը:

Aratta=E-re-ti-a = լեռ վանայ լճից հիւսիս՝ Մաղկանց լեռներում:

Մեր կարծիքով, չի կարելի անուշադրութեան մատնել այն փաստը, որ պատմական Հայաստանի տարածքում կայ ե՛լս մի լեռնաշղթայ Մաղկանց լեռներ անուամբ, որ կոչւում է նաեւ Մաղկաւէտ լեռներ:

«Մաղկաւէտ, Մաղկանց լեռներ, Մաղկէ, Մաղկեայ լեռ, Խաչափայտ, Խաչափայտի լեռներ – «Լեռնագագաթ եւ լեռնաշղթայ Հայկական լեռնաշխարհում, Անտիպոնտական լեռնահամակարգի արեւելեան մասում, էրզրումի դաշտից հիւսիս, Արեւմտեան Եփրատի եւ Թորթումի ջրբաժան շրջանում, Ճորոխի եւ Արեւմտեան Եփրատի միջեւ: Զգուելով հիւսիս-արեւելքից հարաւ-

<sup>21</sup> ՀՀԾՏԲ, հ 4, էջ 34: Հայերէնում կան իկ եւ ալ վերջածանցներ. Յպատակ բառի մէջ հայը ենթադրել է ալ վերջածանց, որ կարելի է զանց առնել, վերացին չունի ալ վերջածանց եւ լեռնանունը պահել է անփոփոխ:

արեւմուտք՝ միանում է կենտրոնական Տաւրոսի ճիւղերից մէկի՝ Անտիտաւրոսի հետ: ...Մաղկաւէտի հարաւում գտնւում է Իգդասոր կիրճը (500-700մ խորութեամբ): Այստեղից սկիզբ են առնում Արեւմտեան Եփրատի, Ճորոխի եւ Թորթումի ակունքները: Լեռան հարաւային ստորոտներին, մօտ 2600մ բարձրութեան վրայ կայ մի քարէ աւազան: Այստեղ հաւաքւում է աղբիւրի սառն ու քաղցրահամ ջուր, որից գոյանում է Եփրատի մի յորդաբուխ ակունքը: Ըստ աւանդութեան՝ այդ սուրբ աղբիւրը գոյացել է բիւզանդական Հերակլ կայսեր ձեռքով փրկուած խաչափայտը գետնից դուրս քաշելու պահին: Աւանդութեամբ էլ բացատրւում են լեռան նաեւ Խաչափայտ, իսկ մօտակայ վանքի՝ ս. Խաչ անունները»<sup>22</sup>:

Պարզ է, որ Եփրատի ակունքն աւելի հին է քան Հերակլ կայսրը, բայց աւանդութիւնը մատնում է, որ մենք գործ ունենք պաշտամունքային ակունքի հետ, որին վերագրւում է աստուածային միջամտութեամբ ծագում:

Այսպիսով, Արեւմտեան Եփրատի ակունքների լեռները կոչւում են Մաղկանց լեռներ, գագաթը՝ Մաղկէ լեռ, իսկ Արեւելեան Եփրատի, որ է Արածանի, ակունքները գտնւում են մի լեռնաշղթայում, որ նոյնպէս կոչւում է Մաղկանց լեռներ: Ակընայտ է, որ մենք գործ ունենք նոյն պատկերացումների եւ աշխարհընկալման հետ: Հայկական լեռնաշխարհի այս երկու հսկայ գետերի ակունքներում գտնուող լեռները նոյն անունով (Մաղկանց եւ Ոսկի) կարող էին կոչել նոյն մարդիկ: Երկու դէպքում էլ մենք գործ ունենք նոյն կրօնական հայեացքի (նաեւ լեզուամտածողութեան) հետ: Յաւելենք նաեւ այն փաստը, որ երկու գետերի ակունքների շրջանն էլ կոչւում են Ոսկի(ք), Ոսկեանք: Արեւմտեան Եփրատի ակունքի շրջանում Մաղկաւէտ լեռներում է գտնւում Ոսկեանց լեռ(նագագաթ)ը<sup>23</sup>, իսկ Ոսկի լեռները նոյնն են, ինչ Դրախտ լեռ(ներ)ը Արածանիի ակունքներում<sup>24</sup>:

Մենք խիստ հաւանական ենք համարում, որ Արատտան ընդգրկել է նաեւ այս Մաղկաւէտ լեռների տարածքը: Արատտայի կազմում ընդգրկուած է եղել Հայկական Տաւրոսի առնուազն որոշ հատուած (եթէ ոչ ամբողջ լեռնաշղթան): Սրա օգ-

<sup>22</sup> ՀՀԾՏԲ, հ 2, էջ 836-837:

<sup>23</sup> ՀՀԾՏԲ, հ 4, էջ 176:

<sup>24</sup> Անդ:

տին է խօսում այն փաստը, որ աստղային երկնքում Արատտա երկիրը մարմնաւորում է Յուլի (Եզն) համաստեղութիւնը: Վերջինս շումերական աղբիւրներում գրում է GU<sub>4</sub> «ցուլ, եզ, խոշոր եղջերաւոր անասուն» նշանով, որ ունի *dapar, dipar* ընթերցումներ: Դեռեւս գերմանացի հանճարեղ լեզուաբան Կարստն է այս *dapar*-ը նոյնացրել հայերէն տաւար, տուար, դուար բառի հետ<sup>25</sup>: Արատտա երկիրը կարող էր կոչուել նաեւ Տաւար-Տաւր-ոս, միայն այն դէպքում, եթէ ընդգրկէր Տաւրոսի լեռնաշղթայի առնուազն մի մասը:

Արատտա երկրի հաւանական տարածքը, որ Արտակ Մովսիսեանն առաջարկել է իր գրքում<sup>26</sup>, մեզ համոզիչ է թւում, իսկ Արատտայի հոգեւոր-քաղաքական կենտրոնը, ըստ մեզ, պէտք է փնտրել Մաղկանց, (կամ որ նոյնն է) Նպատական լեռներում:

**Նախկին մի տեսակետի մասին**

Նախկինում կարծիք է յայտնուել, որ Շումեր-Արատտա ցամաքային ճանապարհն իբր անցել է Սուգա եւ Անշան երկրներով<sup>27</sup>: Դրա համար հիմք են ծառայել «Էնմերքարը եւ Արատտայի գերագոյն քուրմը» վիպերգի 166-167-168 տողերը (աւելի ճիշտ՝ այդ տողերի թարգմանութիւնը, ըստ որի «Սուգային եւ Անշան երկրին նա (դեսպանը) խոնարհուեց կրտսեր երգչի նրման»): Արտակ Մովսիսեանը հերքել է այդ կարծիքը՝ ենթադրելով հետեւեալը. «...Վիպերգերի մեզ հասած բնագրերի գրի առնելու ժամանակաշրջանում (Ք. ա. 20-18դդ) Շումերը գրանուել է էլամական արքաների տիրապետութեան տակ եւ էլամական երկրամասերին «խոնարհուելը» կարող էր եւ լինել այդ տիրապետութեան արտայայտութիւն»<sup>28</sup>: Մենք լիովին համաձայն ենք Արտակ Մովսիսեանի հետեւեալ եզրակացութեան հետ. «Սուգայի եւ Անշան երկրի յիշատակութիւնը կապ չունի նախապարհի ուղղութեան հետ եւ չի կարող կոուան հանդի-

<sup>25</sup> ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ, «Հայերէն արմատական բառարան», Հ. 4, էջ 424:  
<sup>26</sup> ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ, «Հնագոյն պետութիւնը Հայաստանում. Արատտա», Երեւան 1992, էջ 23:  
<sup>27</sup> ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ, «Հնագոյն պետութիւնը Հայաստանում. Արատտա», էջ 18-21:  
<sup>28</sup> Անդ.:

սանալ Արատտայի տեղադրութեան հարցում»<sup>29</sup>: Մեր համաձայնութիւնն ունի լրացուցիչ, ոչ պակաս կարեւոր պատճառ:

Բանն այն է, որ քննուող տողերի նախկին թարգմանութեան մէջ կայ սկզբունքային սխալ: Այժմ ճշտուած է այս հատուածի քերականութիւնը: Պարզուում է, որ ո՛չ թէ դեսպանն է խոնարհուում այդ երկրամասերին, այլ Սուգան եւ Անշան երկրներն են «խոնարհուում» ինանա դիցուհուն: Սուգան եւ Անշանը այս նախադասութեան մէջ ենթականեր են: Նախորդ տողերում յիշատակուած դեսպանը ոչ մի կապ չունի սրա հետ: Նոր՝ ճշտուած թարգմանութիւնը, որ կատարել է Herman Vansiphout-ը հետեւեալն է.

166. Šušin<sup>ki</sup>-e KUR an-ša<sub>4</sub>-an<sup>ki</sup>-a-še<sub>3</sub>

=Šušin and the land of Anšan-Շուշին-ը (եւ) Անշան երկիրը

167. peš<sub>2</sub> TUR gin<sub>7</sub> kiri<sub>3</sub> šu mu-na-ab-gal<sub>2</sub>

=Saluted her humbly, like small mice<sup>30</sup>-ողջունեցին նրան խոնարհաբար փոքր մկների պէս:

Թարգմանութեան մէջ անգլերէն *her*-«նրան» իգական է եւ վերաբերում է 163-րդ տողում յիշատակուող ինանա դիցուհուն: Որ էլամական երկրամասերում եղել է ինանա դիցուհու պաշտամունք, ոչ ոք կասկածի տակ չի առել, բայց սա կապ չունի դեսպանի երթուղու հետ: Դեսպանի «խոնարհուելն» այս երկրամասերին արդիւնք է թիւրիմացութեան եւ սխալ թարգմանութեան:

Նոր թարգմանութիւնը նախորդից տարբերում է նաեւ նրանով, որ *peš<sub>2</sub> TUR* բառակապակցութիւնը նախկինում թարգմանուել էր «երգիչ կրտսեր (փոքր)», նորում մենք տեսնում ենք «մուկ (մկներ) փոքր»: Բանն այն է, որ *peš<sub>2</sub>* նշանն ունի «կրծող, մուկ» եւ «երգիչ» իմաստ: Մենք կարծում ենք, որ ճիշտ թարգմանութիւնը պէտք է լինի «մանուկ երգիչ»: Աստուածութեանը մանուկ երգիչների նման ողջունելը (պաշտօն մատուցելը) համեմատելի է Յիսուսին ողջունելու (Երուսաղէմ մտնելիս) տեսարանի հետ: *Peš<sub>2</sub>* նշանն ունի *gilim<sub>2</sub>, gi-*

<sup>29</sup> Անդ.  
<sup>30</sup> Herman Vansiphout, *Epics of Sumerian kings. The Matter of Aratta*. Atlanta, 2003, pages 64-65.

lin, gilili, ge<sub>19</sub>, ընթերցումներ, որ ներկայացնում են «երգել» իմաստը (իմաստ. նաև gala եւ gala<sub>10</sub>-singer-երգիչ): Այստեղ պետք է տեսնել հայերէն գեղ-«երգ» բառը, որից գեղգեղ-ել-«երգել», գեղ-օն-«երգ»<sup>31</sup>:

**KUR**

Արատտայի անունը գրելու բոլոր տարբերակներում առկայ է KUR գաղափարագիրը, որ նշանակում է «երկիր, աշխարհ (երկրամաս), լեռ(ներ)»: Այս գաղափարագիրը, ընդհանրական իմաստ ունենալով հանդերձ, որոշակի համատեքստերում նշանակում է շատ կոնկրետ, որոշակի երկիր. այսինքն՝ «լեռնաշխարհ» ասելով հասկացել են հինգ Հայկական լեռնաշխարհը. օրինակ՝ ծիրան պտուղը շումերերէն (ուշադրութիւն. ո՛չ աքքադերէն) գըրուած կա ar-ma-nu ձեւով<sup>32</sup>: Ցաւօք, յայտնի չէ վկայման ժամանակը (գոնէ PSD-ն չի բերում): Սրա համարօճէն է <sup>ges</sup>hašhur kur.ra=<sup>ḫan</sup> խնձոր KUR-ի=ar-ma-nu: Վերջին ra նշանը սեռ.տր. հոլովի վերջաւորութիւն է: Այս համատեքստում KUR-ը համարօճէ է Ar-ma-nu-ին<sup>33</sup>: Աւելին՝ Kur նշանն ինքը ունի raman/ramanu ընթերցումներ, ինչը յստակօրէն ցոյց է տալիս, թէ որոշակի համատեքստում «լեռնային երկիր» գաղափարագիրը նշանակում է հինգ Arman(u) երկիր: Շումերերէնում որեւէ այլ սեպանշան չունի նման ընթերցում (գոնէ ըստ PSD-ի), բայց, կարծում ենք, եղածն էլ քիչ չէ<sup>34</sup>:

Փաստօրէն, ծիրանի լատիներէն անունը (եզրը), բառացի թարգմանութիւնն է շումերական եզրի: Ուրեմն՝ չպէտք է զար-

<sup>31</sup> ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ, Հայերէն արմատական բառարան, հ. 1, էջ 534:  
<sup>32</sup> <http://psd.museum.upenn.edu/epsd/nepsd-frame.html>  
<sup>33</sup> Ի դէպ կայ վկայուած <sup>ges</sup>hašhur kur.de-lu<sub>4</sub> - «մրգատու ծառ»: Այստեղ մենք տեսնում ենք դեղ-ձ բառը, որի ձ-ն ուշ անական է. բուն արմատն է դեղ, որից դեղ-ին, դաղ-ձ, դեղձ, դեղձ-ան-իկ եւ այլն: Այստեղ (դեղձի դէպքում) kur-ն ունի նոյն արօճէքը, ինչ «ծիրանի» դէպքում:  
<sup>34</sup> Որ շումերական KUR գաղափարագրի տակ կարող է նկատի առնուել Հայկական լեռնաշխարհը եւ հինգ Արատտան, նշուել է նաեւ Համլետ Մարտիրոսեանի կողմից: Տե՛ս «Աստուածաշնչական Հայաստան», Երեւան, 2005 թ. էջեր 52-63. «Աշխարհարարման աստուածաշնչեան առասպելի պնդումները եւ Հայաստանը»:

մանալ, որ լատիներէն «Հայկական քար»-լաջվարդի անունը լինի նոյն շումերական եզրը. այսպէս.

hašhur kur.ra = խնձոր KUR-ի= ar-ma-nu=Հայկական խնձոր,  
za (քար) KUR= քար Հայկական=լաջվարդ:

Վերջին կոմբինացիայի համատեքստում KUR-ն ունի նոյն արօճէքը, ինչ «ծիրան» եզրի պարագայում, այսինքն՝ նշանակում է Ar-ma-nu:

Za-kur համադրութիւնը կարողում են za-gin<sub>3</sub> (kur նշանն ունի gin<sub>3</sub> եւ kin<sub>3</sub> ընթերցումներ): Այստեղ պէտք է տեսնել հայերէն գ-ակն (= za-gin<sub>3</sub>) -«գոհար, թանկագին քար» բառը: Այս բառն աքքադերէն գըրուած է սգոս, որ մենք համարում ենք հայերէն ակն (յոգն. ակունք) բառից կատարուած փոխառութիւն<sup>35</sup> (հմտ. ակն վանի, վանակն, ակն բիւրեղ): Արեւելասեմական ցեղերը չէին կարող յատուկ եզր ունենալ հեռաւոր լեռնային երկրից բերուող խիստ իւրայատուկ հանքատեսակի համար: Նրանք այդ բառը (եզրը) պիտի փոխառէին շումերներից, ինչպէս փոխ են առել աստղագիտական, դիցաբանական, բուսական եւ այլ կարգի բազմաթիւ եզրեր:

Ի դէպ, ամենեւին էլ պարտադիր չէ, որ za.gin<sub>3</sub> սեպախումբը նշանակի միմիայն «լաջվարդ»: Սա նշանակում է նաեւ լաջվարդի նման կապոյտ ցանկացած (կիսա)թանկարօճէ քար. օրինակ՝ za.gin<sub>3</sub>.KUR.ra-«գ-ակն KUR-ի» նշանակում է «mineral bleu-կապոյտ հանքանիւթ, teinture bleue-կապոյտ ներկանիւթ»<sup>36</sup>:

**Կոզ (Կոզովիտ)**

Մաղկանց լեռները միայն Մաղկոտն գաւառով չեն սահմանափակուած: Մաղկոտնի անմիջական հարեւանն է, ուր տարածուած են Մաղկանց լեռները, Կոզ կամ Կոզովիտ գաւառը: Այս

<sup>35</sup> Աքքադերէնում բնիկ հայերէն բառի առկայութիւնը չպէտք է արտառոց համարուի. հմտ. աքքադ. epu-եփ-ոյ-«եփել, թխել», որ դրուած է շում. tuh-«թխել, եփել, to bake» բառի դէմ: Հայերէն եփ-ոյ-ն ունի բազմաթիւ եւ յուսալի հնդեւրոպական զուգահեռներ, իսկ յունարէն ցեղակիցը գրեթէ տառացի նոյնութեամբ կայ յունարէնում. տե՛ս ՀՐ. ԱճԱՌԵԱՆ, հ. 2, էջ 72:  
<sup>36</sup> René Labat, «Manuel d'Epigraphie Akkadienne», էջ 241, սեպանշան N 586:

տեղանուան ամենահին յիշատակութիւններից մէկը, եթէ ոչ ամենահինը, պատկանում է Բուզանդին, որ գաւառը կոչում է կոզ («Նովիտ անուանեալ ի կոզ գաւառի»)<sup>37</sup>: Այս տեղանուան մէջ պէտք է տեսնել շումերերէն KUG բառը.

KUG - (to be) pure-«(լինել) սուրբ», աքքադ. *ellu* "(ritually) pure"-«ծիսականորէն մաքուր»,

KUG - (to be) bright, shiny-(լինել) պայծառ, փայլուն,

KUG - precious metal-թանկարժէք (ազնիւ) մետաղ,

KUG-gi -gold-ոսկի,

Du<sub>6</sub>-kug -"a cultic and cosmic place"-բլուր (լեռ) կոզ-պաշտամունքային եւ տիեզերական տեղ (վայր)=սրբազան լեռ:

Այս KUG բառի հայերէնն է կոկ<sup>38</sup>-«ոդորկ, հարթ».

կոկ-ել-«սրբել, մաքրել», (հմտ. շում. սուրբ)

կոկ-ել-«ոդորկել, հարթել»,

կոկ-ել-«զարդարել, պննել»:

Ե՛ւ KUG-«սուրբ»-ը, ե՛ւ KUG-gi-«ոսկի»-ն, ե՛ւ DU<sub>6</sub>=լեռ, բլուր KUG-պաշտամունքային, տիեզերական վայր»-ը մեզ տանում են կոզ գաւառ: Յիշենք Մաղկանց լեռների հիւսիսային հատուածի մասին կարեւոր վկայութիւն. «Դրախտ, Ոսկի, Ոսկիք-Լեռ (լեռներ) Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Մաղկոտն գաւառում, Մաղկանց լեռներում: Ըստ Ղ. Ալիշանի Դրախտ է կոչուել Մաղկանց լեռների հիւսիսային մասը, որտեղ գտնւում էր Ոսկի կամ Ոսկիք վայրը՝ Արածանիի ակունքի շրջանը»<sup>39</sup>:

Քանի որ Դրախտ լեռները գտնւում են Մաղկանց լեռների հիւսիսային մասում, ապա նրանք մասամբ պիտի մտնեն Մաղկոտնի հիւսիսային հարեւան կոզ գաւառի տարածք:

<sup>37</sup> ՓԱԻՍՏՍ ԲՈՒՋԱՆԻ, «Հայոց պատմութիւն», Երեւան 1987, էջ 169.  
<sup>38</sup> ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ, Հայերէն արմատական բառարան, հ. 2, էջ 617: Հայերէնում կ եւ գ բաղաձայները ազդել են միմեանց վրայ եւ բոլոր բարբառներում ունենք կամ կուկ, կոկ կամ գուգ, գոգ: Միայն Մուշի բարբառն է ճըլ-տիւ պահել կոզ ձեւը:  
<sup>39</sup> ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 149:

Անգղ

Մաղկոտն գաւառում վկայուած են քաղաք, ամրոց, վանք եւ լեռ Անգղ անուամբ<sup>40</sup>:

Մենք կարծում ենք, որ Անգղ անունը պէտք է կապել Անգեղ դիցանուան հետ, որ շումերական Ներգալ աստծոյ համար-ժէքն է: Միջագետքեան աւանդոյթում Ներգալը մոլորակներից նոյնացում է Մարսի հետ<sup>41</sup>: Սա ծանրակշիռ փաստարկ է յօգուտ այն ենթադրութեան, որ Ներգալ-Անգեղն ունեցել է նաեւ ռազմական գործառոյթներ: Ցանկացած բերդ առաջին հերթին ռազմական կառոյց է, եւ բնական է, որ նա կրի ռազմի աստծոյ անունը: Բերդերն ու ամրոցներն առաջին հերթին կարիքն ունեն Անգեղ աստծոյ հովանաւորութեան:

Մաղկոտն գաւառում Անգղ անուամբ քաղաքի, բերդի եւ լեռան առկայութիւնը կռուան է յօգուտ այն ենթադրութեան, որ այստեղ եղել է Ներգալ-Անգեղ աստծոյ պաշտամունք:

Ասորական աղբիւրներում վկայուած է NI.BAD-a-nu աստուած: Միարժէքորէն գրուած է. <sup>d</sup>Si-mu-ud (=i<sup>h</sup>Nergal) (=i<sup>h</sup>NI.BAD-a-nu)<sup>42</sup>: Այստեղ մենք տեսնում ենք Նպատ դիցանունը: Նպատը որոշակի ժամանակային եւ տարածքային համատեքստում զուգադրուել-նոյնացուել է Ներգալի հետ: Նոյն գաւառում կողք-կողքի մենք տեսնում ենք ե՛ւ Նպատ պաշտամունքային լեռ, ե՛ւ Անգղ լեռ, քաղաք, բերդ: Եւ Անգեղը, ե՛ւ Նպատը զուգադրուում են Ներգալին իբրեւ համաբնոյթ աստուածութիւններ:

Մաղկոտնի Անգղ գիւղաքաղաքը յստակ տեղորոշուած չէ: Հաստատ է միայն այն, որ գտնուել է Արածանի գետի ափին: Սա հէնց այն Անգղն է, որտեղ տեղի ունեցաւ առաջին լուրջ զինուած բախումը պարսից մոգերի եւ հայերի միջեւ: Այս մասին Շղիշէն գրում է. «Իսկ գումիզն Հայոց ամենայն օգնականօքն հանդերձ եւ մոգացն բազմութեամբ յամսեանն չորրորդի եկին հասին

<sup>40</sup> Ղափանցեանը հայկական Անգղ տեղանունները բացատրում է նրանով, որ անգղ բառը կարող էր նշանակել պարզապէս «բերդ, ամրոց»: Նա ենթադրում է, որ \*անգղ-«բերդ» բառը կարող էր ծագել շումերական E<sub>2</sub>.GAL (բառացի՝ մեծ տուն)-«տաճար», (Ուրարտուում E<sub>2</sub>.GAL=«բերդ») բառից: ԳՐ. ՂԱՓԱՆՑԵԱՆ, «Ուրարտուի պատմութիւնը», Երեւան 1940, էջ 36:  
<sup>41</sup> Б. Ван-дер-Верден, «Пробуждающаяся наука 2. Рождение астрономии», стр. 68.  
<sup>42</sup> P. Anton Deimel S. I. Pantheon Babylonicum. Rom, 1950, էջ 31, սեպանշան N 188:



յաշխարհն Հայոց, ի գիւղաբաղաբ մի մեծ՝ որում անուն էր Անգղ: Բանակեցան, բոլորեցան, գետեղեցան եւ ամենայն կողմանց անդր ժողովեցան, եւ էին անթիւ բազմութիւն:

Եւ եղև յետ աւուրց քան եւ հնգից մոգպետն ինքնին մոգօֆն հանդերձ հասանէր մեծաւ գորութեամբ՝ քակել գորբունս եկեղեցւոյն յաւուր միաշարաթուն. գիտորձ առնուլ կամէր գառաջարկութեան գործոյն: Իսկ սուրբն Ղեւոնդ երէց միաքանութեամբ առաջին խորհրդակցօֆն եւ բազում ուխտիւ ի տեղուոջ անդ պատրաստական դիպեցաւ: Քանզի վիրգս ի ձեռն առեալ՝ զկառափունս մոգացն եւ մոգպետին ջարդեցին. փախտական յիւրաբանչիւր վանս արկանէին, եւ ինքեանք ըզպաշտօնն բարձրացուցեալ յեկեղեցւոջն՝ զտէրունական կանոնն կատարէին, մինչեւ ի նոյն միաշարաթին անդադար լինելով»<sup>43</sup>:

Հայերին դաւանափոխ անելու ծրագրով պարսից մոգպետը գալիս է հէնց այս վայրը: Սա կարող է լինել պատահական՝ այն իմաստով, որ Պարսկաստանից դէպի Հայաստանի խորքը գնացող մոգպետը կարող էր ընտրել այլ երթուղի, եւ բախումը կարող էր տեղի ունենալ այլ վայրում: Բայց եթէ աշխարհագրական այս կէտը պատահական չէ, եւ մոգպետը լաւ գիտէր, թէ ուր է գալիս, եւ Անգղի վանքը յատուկ ընտրուած էր որպէս առաջին թիրախ, ապա սա հետաքրքիր է: Առաջին թիրախը լինելու պատիւն ամէն դէպքում պատկանում է Մաղկոտն գաւառի Անգղ վանքին: Սա նշանակում է, որ այստեղ մենք գործ ունենք Հայոց դաւանանքի եւ սրբազան ականդոյթի հետ կապուած մի բացառիկ կարեւոր կէտի հետ: Մոգպետը գալիս է այստեղ, որովհետեւ այստեղ կարող էր հարց լուծուել: Նման հարցերը այստեղ են լուծուում: Դատելով Եղիշէի բերած դրուագից՝ հայերն ունեն յստակ դիրքորոշում, որն արտայայտում են աւելի քան միարժէքօրէն: Մեծ հաշուով հարցն այստեղ էլ լուծուել է:

**KUR Ur3-ur3-ru-ta-ni Aratta<sup>ki</sup>**

«Էնմերքարը եւ Արատտայի գերագոյն քուրմը» վիպերգի 437-րդ տողում գրուած է KUR Ur3-ur3-ru-da-ni Aratta<sup>ki44</sup>: Կանեւան «KUR ur3-ur3-ru-da-ni» հատուածն ընդհանրապէս բաց է

<sup>43</sup> ԵՂԻՇԷ, «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», էջ 167, երրորդ յանակ. տող 4-22:

<sup>44</sup> Herman Vansiphout, Epics of Sumerian kings. The Matter of Aratta. Atlanta, 2003, page 80.

թողել, չի թարգմանել, տեղը դրել է կախման կէտեր, իբր անհասկանալի, անթարգմանելի հատուած. «(Կանեւայի մօտ տողերի համարակալումը 1-ով տարբերուում է. այստեղ՝ տող 438) ПОДОБНО РЫБЕ ..... К АРАТТЕ ПРИБЛИЗИЛСЯ»<sup>45</sup>: Մենք կարծում ենք, որ այստեղ ի դէմս Ur3-ur3-ru-da-(ni) բառի, մենք գործ ունենք յատուկ անուան հետ, որ Այրարատ կամ Արարատ անունն է: Մեր փաստարկները հետեւեալն են.

Քննուող վիպերգում երկրների անունները գրուում են հէնց այսպէս «KUR+տեղանուն»: Այս դէպքերում KUR-ը կարելի է հասկանալ ե՛լ որպէս դետերմինատիւ, ե՛լ որպէս զաղափարագիր: Մեր արդէն բերած օրինակում (տող 166) KUR an-ša4-an<sup>ki</sup> թարգմանուած է «the land of Anšan- Անշան երկիրը»: Թւում էր, թէ նոյն սկզբունքով թարգմանիչն այստեղ պիտի թարգմանի KUR ur3-ur3-ru-da-ni=the land of Ur3-ur3-ru-da-(ni)<sup>46</sup>, բայց թարգմանիչն այստեղ (ur3-ur3-ru-da-ni բառի մէջ) ենթադրել է բայ անգլերէն to dart-«նետուել, ոստնել, ցատկ կատարել» իմաստով:

Ur3-ur3-ru-da-ni բառ չկայ շումերերէնի ոչ մի բառարանում: Օքսֆորդի եւ Փենսիլվանիայի համալսարանների կայքերում, որտեղ պարբերաբար թարմացւում են բառարանները, եւ զգալի թուով նոր հրապարակումներ են լինում, նոյնպէս չկայ նման բառ: Բառի չգոյութիւնն է պատճառը, որ Կանեւան չի թարգմանել KUR ur3-ur3-ru-da-ni հատուածը: Բառի չգոյութիւնը, իբրեւ հասարակ անուն, ցոյց է տալիս, որ սա կարող էր ընդհանրապէս հասարակ անուն չլինել, այլ լինել յատուկ անուն: Herman Vansiphout-ի թարգմանութիւնը (to dart) չունի որեւէ զրաւոր հիմք: Դա իր ենթադրեալ թարգմանութիւնն է, որ բխեցուել է համատեքստից (աւելի ճիշտ՝ իր ենթադրած համատեքստից): 437-րդ տողը նա թարգմանել է հետեւեալ կերպ.

437. HI.SUHUR<sup>ku6</sup>-gin7 KUR ur3-ur3-ru-da-ni aratta<sup>ki</sup>-aš ba-teg3

Darted over the highland like a swimming carp and reached Aratta.

<sup>45</sup> «Энмеркар и верховный жрец Аратты», транскрипции, перевод, комментарии и вводные статьи И. Т. Каневой, ВДИ, 1964, N 4, стр. 215.

<sup>46</sup> Ni-ն այստեղ մեծ հաւանականութեամբ շումերերէնի քերականական մասնիկ է:

«(Դեսպանը) նետուեց (ոստնեց) լեռնաշխարհի (բարձրա-  
լանդակի) վրայով լողացող ծածան ձկան նման եւ հասաւ Արատտ-  
տա»:

Թէ ինչպէս կարելի է նետուել, ոստնել լեռնաշխարհի վրա-  
յով լողացող ձկան նման, թողնում ենք թարգմանչի երեւակայու-  
թեանը, բայց փաստենք, որ ո՛չ այս եւ ո՛չ նախորդ տողերում  
darted-«նետուեց, ոստնեց» բառ չկայ վկայուած: Կայ «հասաւ,  
հասնում է» (ba-teg<sub>3</sub>): Ուրեմն՝ պէտք է թարգմանել. «հասաւ Ու-  
րուրուտա(նի) երկիր՝ Արատտա»:

Դեսպանի 5-րդ ճամփորդութիւնը Ուրուրուից Արատտա բա-  
ցառիկ է նրանով, որ նկարագրուում է շատ կարճ՝ ընդամէնը 3  
տողում:

435. kig<sub>2</sub>-gi<sub>4</sub>-a aratta<sup>ki</sup>-aš gin-a-ni (=du-a-ni)

դեսպանը Արատտա<sup>երկիր</sup> գնում է (ընթանում է, վազում է)

436. u<sup>hmušen</sup>-gin<sub>7</sub> hur-sag-ga<sub>2</sub> nim-gin<sub>7</sub> mel<sub>2</sub>-rin-a

հաւքի պէս լեռներով (լանջերով), (գնում է) ճանճի պէս  
մեղրի (մեղուի),

437. HI.SUHUR<sup>ku6</sup>-gin<sub>7</sub> KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-ni Aratta<sup>ki</sup>-aš ba-  
teg<sub>3</sub>

(գնում է) ծածանի <sup>ձուկ</sup> պէս (եւ) երկիր Ուրուրուտա(նի)՝  
Արատտա հասնում:

Այս հատուածում չկայ ոչ մի բայ բացի du/gin-«գնալ, քայ-  
լել, ընթանալ, վազել» բառից: Հսկայական ճամփորդութեան այս-  
պիսի հակիրճ նկարագրութիւնը խօսում է այն մասին, որ այս-  
տեղ փոխաբերական իմաստով, բանաստեղծական լեզուով հաւքը,  
մեղուն եւ ձուկը խորհրդանշում են ողջ ճանապարհն ու նրա  
«մանրամասները»: Նման փոխաբերութիւնները սովորական երե-  
ւոյթ են նոյնիսկ այսօր (հմմտ. «հաւքն իր թեւով, օձն իր պոր-  
տով չի կարող հասնել» եւ նման դարձուածքները): Հաւքը խոր-  
հրդանշում է բարձունքները, որով ընթանում է դեսպանը (ինչը  
նշուած է), մեղուն՝ իրեն բնորոշ տեղանքները՝ անտառներն ու  
ձորերը, որտեղ որպէս կանոն լինում են մեղրաճանճի՝ վայրի մե-  
ղուի բները, իսկ կարպ-«ծածան, գետածածան» ձուկը խորհր-  
դանշում է գետերը, որ անցնում է դեսպանը: Ծածանը պատա-  
հական չի ընտրուած: Դեսպանը գնում է Ուրուրուից Արատտա

Եփրատի հոսանքն ի վեր ճիշտ այնպէս, ինչպէս ծածան ձուկն է  
գնում գետի ակունքն ի վեր ձկնկիթ թափելու:

Դեսպանի բոլոր ճամփորդութիւններն էլ վիպերգում ներ-  
կայացուած են նման փոխաբերական-բանաստեղծական պատկեր-  
ներով: Համեմատենք օրինակ Ուրուրուից Արատտա նրա յաջորդ  
ճամփորդութեան նկարագրութիւնը, որ ընդամէնը 4 տող է:

507. kig<sub>2</sub>-gi<sub>4</sub>-a HU- gin<sub>7</sub> te<sub>8</sub> tup<sub>2</sub> ia<sub>3</sub>-ra<sub>6</sub>-e

դեսպանը հաւքի պէս թեւ(եր)ը թափահարեց

The messenger was like a bird flapping its wings

508. <sup>ur</sup> bar-ra maš<sub>2</sub>-e us-sa- gin<sub>7</sub> guru<sub>5</sub>-uš i<sub>3</sub>-bur<sub>2</sub>-bur<sub>2</sub>-re

ինչպէս գայլի (որսաշան կողմից) հետապնդող այծ...

(guru<sub>5</sub>-uš bur<sub>2</sub> բառակապացութիւնը յայտնի է նաեւ այլ  
աղբիւրներից, բայց իմաստը յայտնի չէ)

509. hur-sag 5 hur-sag 6 hur-sag 7-e im-me-re-bal-bal

լեռ 5, լեռ 6, լեռ 7 նա անցաւ

510. igi mu-un-il<sub>2</sub> aratta<sup>ki</sup>-aš ba-teg<sub>3</sub><sup>47</sup>

աչքերը բարձրացրեց՝ Արատտա էր հասել:

Պարզ է, որ այստեղ կրկին դեսպանի ընթացքը համեմատ-  
ուում է հաւքի թռիչքի եւ գայլից հետապնդող այծի (կամ այ-  
ծին հետապնդող գայլի) սլացքի հետ: Այս օրինակից ակնյայտ է,  
որ նախորդ ճամփորդութեան մէջ յիշատակուող ծածանն ընդա-  
մէնը խորհրդանշական պատկեր է եւ կապ չունի KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-  
ru-ṭa-ni-ի հետ:

KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-ni Aratta<sup>ki</sup> գրելաձեւը ցոյց է տալիս, որ  
այս երկու երկրները նոյնն են կամ որ աւելի հաւանական է՝ մէ-  
կը միւսի մաս է կազմում: Քանի որ Արատտա երկիրը կոչւում  
է նաեւ Արատտա քաղաքի երկիր, մենք աւելի հաւանական ենք  
համարում, որ Արատտա քաղաքն է մաս կազմել աւելի մեծ Ur<sub>3</sub>-  
ur<sub>3</sub>-ru-ṭa-(ni) երկրի: Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-ի մէջ մենք տեսնում ենք Արա-

<sup>47</sup> Herman Vansiphout, Epics of Sumerian kings. The Matter of Aratta. Atlanta, 2003, page 84.

րատ կամ Այրարատ տեղանունը, որ «Աշխարհացոյց» է հասել Այրարատ նահանգի անունամբ:

Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ša բառի հնչիւնական տեսքը ճշտիւ համապատասխանում է Արարատ բառին. da եւ ša նոյն սեպն է, եւ դ-տ տարբերութիւն այստեղ չկայ, իսկ ու-ա տարբերութեան համար հմտ. նոյն տեղանունը ե՛լ ք-ով եւ ւ-ով գրելու բազմաթիւ օրինակները (arme-urme եւ այլն) կամ ari/uri, որ նոյն սեպն է, եւ որով Վանի թագաւորութեան արքաները գրում են իրենց երկրի անունը՝ An<sup>ki</sup>=Uri<sup>ki</sup>:

Վերջարանի փոխարէն

Ինչպէս նշեցինք, ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-(ni) բառ՝ հասարակ անուն, շումերերէնում չկայ վկայուած, բայց կայ մի բառ, որ շատ նման է՝ šu-ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni-purification (ceremony)-«սրբազործում, մաքրագործում (ծէս)»<sup>48</sup>: Աքքադ. նոյն (takpeltu) բառի դիմաց շումերերէնում կայ երկու բառ՝ šu-gur-gur եւ šu-ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni<sup>49</sup>: Եթէ ŠU-ն երկու դէպքում էլ համարենք գաղափարագիր՝ «ձեռք», եւ համարենք բառի արմատական մաս, ապա վերջինս կը նոյնանայ վիպերգի ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni ձեւի հետ, մանաւանդ որ այսքան երկար բառի դէպքում պատահական նմանութիւնը քիչ հավանական է: «Սրբազործում» եզրի նախնական իմաստը բնականաբար պէտք է լինի «մաքրել, սրբել»: Եւ իսկապէս, Լաբայի բառարանում մենք տեսնում ենք (ŠU-)UR<sub>3</sub>, որ նշանակում է (Ֆրանսերէն) effacer-«մաքրել, սրբել»<sup>50</sup>: ŠU-«ձեռք» գաղափարագիրը դրուած է փակագծերում, որովհետեւ այս դէպքում այն կարող է գրուել կամ չգրուել. միեւնոյն է, երկու դէպքում էլ UR<sub>3</sub>-ը նշանակում է «մաքրել, սրբել»: Այսինքն՝ šu-ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni եւ ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni ձեւերը բացարձակ համարժէքներ են: Սա նշանակում է, որ

KUR ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni Aratta<sup>ki</sup>=երկիր (լեռ) սրբազործման (ծէսերի)՝ Արատա:

<sup>48</sup> <http://psd.museum.upenn.edu/epsd/nepsd-frame.html>

<sup>49</sup> Անդ:

<sup>50</sup> René Labat, «Manuel d'Epigraphie Akkadienne», Paris 1976, էջ 131, սեպանը շան N 255:

KUR ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni=KUR ME SIKIL-la=երկիր (լեռ) սուրբ ծէսերի (աստուածային օրէնքների):

Այս դէպքում, KUR ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni-ն պէտք է դիտարկել ոչ թէ որպէս յատուկ անուն, այլ որպէս հասարակ անուն եւ Արատա երկրի բնորոշում, որի գրեթէ բառացի տարբերակը վաղուց յայտնի է այլ ձեւակերպմամբ (KUR ME SIKIL-la):

Ենթադրենք, որ մենք գտել ենք ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni հասարակ անունը եւ նրա իմաստը (նոյնացնելով šu-ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni-ի հետ): Արդե՞ք, սա հակասում է այն պնդմանը, որ այստեղ պէտք է տեսնել հետագայի Ա(յ)րարատ տեղանունը: Մեր կարծիքով, ոչ, որովհետեւ բոլոր տեղանուններն էլ ծագում են հասարակ անուններից: Հէնց երկրներին տրուած բնորոշումներն են, որ յետոյ դառնում են մշտական. այսինքն՝ դառնում են յատուկ անուն: Վերը քննուած կողմ յատուկ անունը նոյն շումերերէն kug-«սուրբ» հասարակ անունն է:

Աւելին՝ Արատայի միւս բնորոշումը՝ KUR me-sikil-la, նոյնպէս պահպանուել է որպէս յատուկ անուն: Sikil-«սուրբ» գաղափարագիրը սովորական վանկագրի el սեպանշանն է: EL շումերերէն նշանակում է «ելնել, բարձրանալ, բարձրացնել, ծագել», այստեղից՝ «բարձրել, աստուած(ային), սուրբ» իմաստները: Sikil ընթերցումը el բառի հոմանիշն է: Շումերական դպրութեան մէջ գաղափարագիրը հոմանիշով կարդալ-հնչեցնելը սովորական երեւոյթ է: Սա նշանակում է, որ նոյն սեպը նոյն յաջողութեամբ կարելի է կարդալ el հնչիւնական արժէքով. այսպէս՝ me-sikil-la=me-el-la: Մեւ վկայուած է ուրարտական արձանագրութիւններում, որպէս գետանուն՝ Me-li-a-i-ni ID<sub>2</sub>: Ըստ Ն. Յարութիւնեանի, համապատասխանում է Վերին Եփրատին, Արածանիի հետ միախառնման տեղից հիւսիս<sup>51</sup>: Յիշենք, որ Մեղ է կոչւում նաեւ Արածանիի վտակը, որ ժողովրդական ստուգաբանութեամբ դարձել է Մեղրագետ:

Սա նշանակում է, որ մենք կանգնած ենք Ա(յ)րարատ բառի նախնական իմաստը հասկանալու շեմին:

KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ša-(ni) = երկիր (լեռ) «սրբազործման (ծէս(եր)ի)»,

<sup>51</sup> Н. В. Арутюнян, «Корпус урартских клинообразных надписей», Ереван, 2001, стр. 514.

KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-(ni) = լեռ Արարատ, լեռներ Արարատեան,

KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-(ni) = երկիր Այրարատ:

«Էնմերքարը եւ Արատտայի գերագոյն քուրմը» վիպերգի իրադարձութիւնները կատարուել են մ.թ.ա. 28-27-րդ դարերում: Այն ժամանակ ururuta/ararata բառը եղել է միաժամանակ ե՛ւ յատուկ անուն, ե՛ւ հասարակ անուն, ինչպէս այսօր էլ Ոսկի-ն, Ծաղկանց լեռները միաժամանակ ե՛ւ յատուկ, ե՛ւ հասարակ անուններ են:

Մենք սա համարում ենք Ա(յ)րարատ տեղանուն (գիտութեանը յայտնի) հնագոյն յիշատակութիւնը գրաւոր աղբիւրներում:

ԱՐՄԷՆ ԴԱԻԹԵԱՆ